



# ԵՄ-ին անդամակցության գործընթացը

## բայլ առ բայլ

Հունիս 2022  
#EUenlargement

Վստահության վրա հիմնված ընդլայնման քաղաքականությունն աշխարհառազմավարական ներդրում է Եվրոպայում **խաղաղության, կայունության, անվտանգության** եւ **բարգավաճման** գործում: Այն հիմնված է արդար եւ խիստ պայմաններին բավարարման ու թեկնածու երկրների հստակ արժանիքների վրա և նրանցից պահանջում է իրականացնել համալիր բարեփոխումներ բազմաթիվ ոլորտներում, ինչպիսիք են՝ օրենքի գերակայությունը, տնտեսությունը, կոռուպցիայի դեմ պայքարը եւ կազմակերպված հանցավորությունը: Առաջնային նշանակություն ունեն բարիդրացիական հարաբերությունները եւ տարածաշրջանային համագործակցությունը:

### ԵՄ-ին անդամակցության հիմնական քայլերը



**1** Երկիրը դիմում է ներկայացնում հորհրդին (ԵՄ անդամ պետություններ):



**2** Հանձնաժողովը ներկայացնում է դիմումի վերաբերյալ եզրակացություն:



**3** ԵՄ անդամ պետությունները միաձայն որոշում են կայացնում երկրին թեկնածուի կարգավիճակ տրամադրելու մասին:



**4** Թեկնածու երկրի կողմից իրեն առաջադրված պայմանները բավարարելուց հետո բոլոր անդամ պետությունների համաձայնությամբ սկսվում են անդամակցության բանակցությունները:



**5** Հանձնաժողովն առաջարկում է բանակցային շրջանակի նախագիծ, որն այնուհետեւ պետք է համաձայնեցվի անդամ պետությունների կողմից:




**6** Բանակցությունների ընթացքում, որոնք կառուցված են ըստ բլոկերի եւ գլոբալների, երկիրը պատրաստվում է ԵՄ օրենքների ու չափանիշների ներդրմանը: ԵՄ անդամ բոլոր երկրները պետք է հաստատեն, որ յուրաքանչյուր դեպքում բոլոր պահանջները բավարարվել են:



**7** Բանակցությունների ավարտից հետո Հանձնաժողովը տալիս է իր կարծիքը երկրի՝ անդամ պետություն դառնալու պատրաստ լինելու վերաբերյալ:



**8** Ելնելով այդ կարծիքից՝ ԵՄ անդամ պետությունները միաձայն որոշում են կայացնում ավարտել բանակցային գործընթացը: Եվրոպական խորհրդարանը եւս պետք է տա իր համաձայնությունը:



**9** ԵՄ անդամ բոլոր պետությունները եւ թեկնածու երկիրը ստորագրում եւ վավերացնում են Անդամակցության պայմանագիրը, ինչից հետո երկիրն անդամակցում է ԵՄ-ին: